Արձանագրության 4

Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերման ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.03.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Պետրոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաբաջանյան /գնահատող/, Է. Ավագյան /գնահատող/
Ռ. Կարապետյան /բացող/, Ս. Բադալյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Հ. Պետրոսյան)

Ընդունել ի գիտություն որ.

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի՝ «ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի և ընթացկարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ Վահրամ Գրիգորյան Ա/Ձ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Հ. Պետրոսյան)

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Պետրոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը, բայց

ոչ ուշ քան 22.03.2019թ. ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Հ. Պետրոսյան

Անդամներ՝ ..... Հ. Բաբաջանյան

..... Է. Ավագյան

..... Ռ. Կարապետյան

..... Ս. Բաղալյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան